Արձանագրություն N 2

«ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով Ծաղկաձորի համայնքապետարանի կարիքների համար «Մարդատար ծառայողական ավտոմեքենայի» գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

ք.Ծաղկաձոր 20 փետրվար 2024թ.

ժամը 14:00

Հանձնաժողովի նախագահ՝
համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ոսկան Եղիազարյան
Հանձնաժողովի անդամներ՝
համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի,տուրիզմի,առևտրի,սպասարկման և գովազդի բաժնի գլխավոր մասնագետ Գագիկ Հակոբյան
համայնքի ղեկավարի խորհրդական Գուրգեն Հակոբյան
համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական,քարտուղարության, անձնակազմի կառավարման բաժնի առաջատար մասնագետ Կարեն Ներսիսյան
համայնքապետարանի աշխատակազմի վարորդ Հովիկ Աբրահամյան
քարտուղար՝ Ա.Ավետիսյան

1. Տեղեկություններ հարցումների և պատասխանների վերաբերյալ

Հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել,պարզաբանումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

2. Տեղեկություն «ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/4» ծածկագրով էլ.աճուրդի ընթացակարգի հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

«ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հայտերի ներկայացման վերջնաժամկետն է եղել **2024 թվականի փետրվարի 19-ը, ժամը 14:00**-ն, հակադարձ աճուրդի օրը և ժամը համակարգի կողմից ինքնաշխատ եղանակով սահմանվել է՝ **2024 թվականի փետրվարի 20-ը, ժամը 14:00**-ն:

3. Տեղեկություն՝ «ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/4» ծածկագրով ընթացակարգի գնման առարկայի հայտրով սահմանված գնման գնի վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գնման գինը՝ մեկ թվով արտահայտված.

Հ/հ	Ապրանքի անվանումը	Հափաբաժնի ընդհանուր գնման գինը
1	**«Մարդատար ծառայողական ավտոմեքենա»**	***18500000***

4. *«ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/4»* ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների և ներկայացված գնային առաջարկների մասին

4.1 Գնման ընթացակարգին հայտ ներկայացրել են հետևյալ մասնակիցները.

Հ/հ	*Մասնակիցների անվանումը*	*Գործունեության հասցեն,ՀՎՀՀ-ն և էլ.փոստի հասցեն*
1.	«ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ» ՍՊԸ	Ք.Երևան,Ծովակալ Իսակովի պող.22, 01557589, info@toyota.am
2.	LA IMPORT LLC	Ք.Երևան,Երկաթուղայիններ 4փ. 2/4, 00524412, llaaimport@yandex.ru

4.2 «ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/4» ծածկագրով ընթացակարգին ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները՝

Չափաբաժին	Մասնակցի անվանումը	Նախնական առաջարկ Արժեք	ԱԱՀ	Առաջարկված գինը	Վերջին առաջարկ Արժեք	ԱԱՀ	Առաջարկված գինը
1.«Մարդատար ծառայողական ավտոմեքենա»	«ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ» ՍՊԸ	14666666.67	20 %	17600000	14666666.67	20 %	17600000.00
	LA IMPORT LLC	99000000	0 %	99000 000	99000000	0 %	99000000.00

5.*Տեղեկություններ բացված յուրաքանչյուր էլեկտրոնային հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին*

5.1. էլեկտրոնային աճուրդի համակարգում գնահատող հանձնաժողովի կողմից ***«ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/4»*** ծածկագրով ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից **«ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ» ՍՊԸ-ի** ներկայացրած հայտը գնահատվել է բավարար: Փաթեթում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին: **Ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերի պահանջներին:**

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

6.« ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/4» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցի, էլեկտրոնային աճուրդի գնահատման նիստի արդյունքների ամփոփման և պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

6.1 ***«ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/4»*** ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվել **«ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ» ՍՊԸ -ն**՝ որպես բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

6.2 Հաստատել ***«ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/4»*** ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

6.3 Ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվելու է <<Գնումների մասին>> օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետի /10 օրացուցային օր/ ավարտին հաջորդող 4-րդ աշխատանքային օրը ծանուցումն ուղարկվելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

6.4 Անգործության ժամկետի ավարտից հետո, 4-րդ աշխատանքային օրը, պայմանագրի կնքման նպատակով, ընթացակարգի ընտրված/հաղթող/ մասնակցին ծանուցել՝ ներկայացնելով կնքվելիք պայմանագրի նախագիծը և առաջարկել **5 աշխատանքային օրվա ընթացքում** ներկայացնել **պայմանագրի ապահովում՝ գնման գնի 10 տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ գնման գնի 15 տոկոսի չափով: Պայմանագրի և որակավորման ապահովումները ներկայացվում են՝ միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:**

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

Գնահատող հանձնաժողովի անդամի անունը,ազգանունը	Ստորագրությունը
Նախագահ՝ Ոսկան Եղիազարյան	
Անդամներ՝ Գուրգեն Հակոբյան	
Գագիկ Հակոբյան	
Հովիկ Աբրահամյան	
Կարեն Ներսիսյան	
Քարտուղար՝ Ա.Ավետիսյան	